ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 143-Ա

Արթիկ համայնք 19 սեպտեմբերի 2025թվական

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍ ԱՄՍԻՆ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ԻՐԱՎԱԿԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 37-րդ կետի, հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի տեղակալի 2025թվականի օգոստոսի 19-ի N 02.1//07084-2025 գրությամբ ներկայացված առաջարկությունները, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի տեղական ինքնակառավարման մարմինների սեփական լիազորությունների իրականացման նկատմամբ 2025թվականի օգոստոսի 4-ից 8-ը իրականացված իրավական հսկողության արդյունքների վերաբերյալ կազմված 2025թվականի օգոստոսի 18-ի թիվ ԻՀ 02 արձանագրությունում նշված խախտումներն ամբողջությամբ ընդունել ի գիտություն՝ համաձայն հավելվածի:
2. Առաջարկել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայքի ղեկավար Անանիկ Ոսկանյանին՝ միջոցներ ձեռնարկել համայնքում իրականացված իրավական հսկողության արդյունքում արձանագրված խախտումներն ամբողջությամբ և սահմանված ժամկետներում վերացնելու, հետագայում այդպիսիք բացառելու ուղղությամբ:
3. Որոշման կատարման հսկողությունը դնել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ղեկավար Անանիկ Ոսկանյանի վրա:

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ավագանու անդամներ

Կողմ (16)	**Դեմ (0)**	**Ձեռնպահ (0)**
Ոսկանյան		
Թովմասյան		
Մարտիրոսյան		
Աղրամանյան		
Բաղդասարյան		

Գևորգյան
Հովհաննիսյան
Պետրոսյան
Գևորգյան
Ասատրյան
Չարչյան
Սահակյան
Մինասյան
Վարդանյան
Վարագյան
Մկրտչյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա.ՈՍԿԱՆՅԱՆ

Կ. Տ.
Հայաստանի Հանրապետության
Շիրակի մարզ, Արթիկ համայնք
2025 թվականի սեպտեմբերի 19